ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 28

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի առաջին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N 286 որոշման 22-28-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Զորավան համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 32-Ն որոշումը և 2017 թվականի մայիսի 29-ի հողամասը աճուրդով վաճառելու մասին թիվ 10 արձանագրությունը. **որոշում եմ՝**

1. Զորավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր 07-031-0219-0011) 1.39328 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը սեփականության իրավունքով օտարել 2017 թվականի մայիսի 29-ի կայացած հողի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Ավետիք Մկրտչի Չալաբյանին:

2. Աճուրդում առաջարկված 1 079 000 (մեկ միլիոն յոթանասունինը հազար) ՀՀ դրամ արժեքը 10-օրյա ժամկետում վճարելուց հետո քաղաքացու հետ կնքել օտարման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետ. գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 29
գ. Զորավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 29

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայն համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ի N 19-Ն որոշման և հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 29-ին կայացած հողի վարձակալության մրցույթի արդյունքները. **որոշում եմ՝**

1. Զորավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ /ծածկագիր 07-031-0038-0009/ 1.50577 հա արոտավայրը վարձակալության իրավունքով, տարեկան 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Հարություն Հարությունյանին:

2. Հարություն Հարությունյանի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետ. գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 30
գ. Զորավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 30

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայն համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ի N 19-Ն որոշման և հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 29-ին կայացած հողի վարձակալության մրցույթի արդյունքները. **որոշում եմ՝**

1. Զորավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ /ծածկագիր 07-031-0207-0069/ 2.50226 հա վարելահողը և արոտավայրը վարձակալության իրավունքով, տարեկան 21000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Մասիս Թովմասյանին:

2. Մասիս Թովմասյանի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետ. գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2017թ. մայիսի 30
գ. Զորավան